600.0055.17.02.21

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2021 թվականի №55Ա
ք.Երևան

## «ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0648 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ՝

ա) «ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով Ընկերության գտնվելու վայրի փոփոխության հիմքով վերաձևակերպել Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 7-ի №294Ա որոշմամբ տրամադրված «Արեգ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0648 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0648 լիցենզիա), քանի որ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) Ընկերությունը ԼԷ №0648 լիցենզիայի վերաձևակերպման հայտը ներկայացրել է Ընկերության գտնվելու վայրի փոփոխությունն իրավական ուժ ստանալու օրվանից 5 ամիս ինն օր հետո՝ Կարգի 90-րդ կետով սահմանված տասնհինգօրյա ժամկետի փոխարեն,

դ) Հանձնաժողովը 2021 թվականի փետրվարի 15-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 90-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի փետրվարի 16-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 90-րդ կետի պահանջները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 7-ի «ԱՐԵԳ ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արեգ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №294Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արեգ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0648 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.
   «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վարդանանց փողոց 18/1, տարածք 56»:
2. Կարգի 90-րդ կետի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ

մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի փետրվարի 18-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
17 փետրվարի 2021թ.